

Ղարաբաղեան Երկու Ծուղակ

Գրեց ՏՈՒԹ. ՌՈՒԲԷՆ ՊՕՂՈՍԵԱՆ

Ղարաբաղեան պահանջատիրութիւնը բնութագրելու ճիշդ կատարուած են մինչեւ հիմա, սակայն, տարուած առօրեայ դէպքերու արագընթացութեան պատճառով հասկանալի չեն, չենք նկատած թէ շարժումը կը ներկայացնէ մեր պատմութեան կարեւորագոյն անկիւնադարձերէն մէկը, քանի որ 2000 տարիներէ ի վեր հողային տարածքներ կորսնցնելու գործընթացը դադարած ըլլալով, մեզի համար կը սկսէր նոր դարաշրջան մը՝ մեր կորսնցուցած հողերու վերագտնումը: Ուշ է արդէն որոշելու համար թէ այս նոր հանգրուանը՝

ա) Հիմա՞ պէտք էր որ սկսէր, եւ բ) Ղարաբաղով պէտք էր սկսէր: Հիմա սկսաւ եւ Ղարաբաղով սկըսաւ, եւ դէպքերը ցոյց տուին որ թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Սփիւռքի մէջ այս շարժումը չէր նախապատրաստուած, չէր ուսումնասիրուած հայկական խնդրի ծաւալուն համակարգին մէջ: Այլ խօսքով՝ Ղարաբաղեան շարժումը մաս չկազմեց համապարփակ քրնոլոգիան մը կամ ռազմավարութեան մը, որ ուսումնասիրուած ըլլար եւ, փոխանակ մեզ ներքաշելու չնախատեսուած կացութիւններու մէջ, մենք ըլլայինք կացութիւններ ստեղծողը՝ առաջը առնելու համար աւելորդ առճակատումներու, մանաւանդ մեզի նպաստաւոր հաւանական կողմերու հետ:

Այս կացութենէն ծնած առնուազն երկու երեւոյթներ կան, որոնք մտահոգութիւն պէտք է պատճառեն մեզի: Անոնց մասին պիտի խօսինք ներկայ գրութեան մէջ:

Ա) ՀՈՂԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՔԻ ԹԷ ՄԻԱՅՆ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ

Ղարաբաղի Հայաստանի վերամիացման պահանջը եկաւ տեսակ մը մորաթորիով (յետաձգման, սառեցման) ենթարկելու մեր պահանջատիրութիւնը արեւմտահայաստանեան հողամասերուն շուրջ: Դէպքերը առին այնպիսի ընթացք մը, որուն մասին կարելի է ըսել թէ հայութիւնը կը գտնուէր զգացական այնպիսի վիճակի մը մէջ, ուր, յանուն Ղարաբաղի վերագտնման, ան պատրաստ էր ամէն տեսակի զոհողութիւններու, ամէն տեսակի զիջումներու, գիտակցուած կամ չգիտակցուած զիջումներու: Գիտակցուած զիջումներէն մէկն այն էր, որ Ղարաբաղի վերադարձը պահանջել չի նշանակեր «հողային պահանջ» դնել:

Հարց տանք մենք մեզի, թէ ինչո՞ւ «հողային պահանջ» հասկացողութիւնը կը վերցնենք Ղարաբաղի պարագային: Ո՞ւր էր անյարմարութիւնը «հողային պահանջ»ը պահելուն մէջ՝ Ղարաբաղի ժողովուրդին «ինքնորոշման իրաւունքի» գործածութեան առընթեր: Ինչո՞ւ համար սխալ կը նկատուի Ղարաբաղեան պահանջատիրութիւնը իբրեւ «հողային պահանջ» որակաւորելը:

Մենք կը կարծենք թէ, պարզապէս, մեծ սխալ մը գործած պիտի ըլլանք եթէ մեր մէջ վերջնականապէս արմատ բռնէ այն մտեցման ձեւը, այն է՝ միայն ինքնորոշման գաղափարին յենելով յառաջ տանի մեր պահանջատիրութիւնը: Եթէ նման սխալ ուղիով մը ընթանանք, երկու կարեւոր շեւերու համար մահացուն սխալներ գործած կ'ըլլանք:

1) Նախ եւ առաջ Սովետական Հայաստանը դադարած կ'ըլլայ, աւելի ճիշդ՝ հրաժարած կ'ըլլայ որեւէ ատեն

կանգնելու իբրեւ հայ ժողովուրդի պետականութիւնը ներկայացնող էութիւն: Ուզածդ երկիրը կրնայ ինքնորոշման իրաւունքի ջատագով ըլլալով՝ թիկունք կանգնիլ Ղարաբաղի ժողովուրդի ինքնորոշման իրաւունքին: Սովետական Հայաստանը գործած կ'ըլլայ, այս պարագային, իբրեւ որեւէ պետութիւն, այդպէս երրորդ կողմ մը վէճի մը մէջ, որ ծագած է ոչ թէ Հայաստանի ու հայութեան եւ Ատրպէյճանի ու ազերիներու միջեւ, այլ Ղարաբաղի ժողովուրդին (որ կարծես թէ հայութենէ հրաժարած ըլլար) եւ Ատրպէյճանի միջեւ: Սովետական Հայաստանը դուրսէն դիտող մը ըլլար կարծէք, որ այս հարցով չէ շահագրգռուած աւելի քան, ըսենք, Զիմպապուէն:

2) Միւս կողմէ, եթէ միմիայն «ինքնորոշման իրաւունքի» վրայ պիտի յենինք մեր հողային պահանջները յաջողցնելու համար, ապա կրնանք հիմակուրէն հրաժեշտ տալ Հայ Դատին: Քանի որ, ինչ ինքնորոշման մասին կրնայ խօսք դառնալ, երբ պիտի համարձակինք, որ մը չէ որ մը, արձարծելու նախնիներու կամ թուրքիոյ կողմէ բռնազրաւուած հողերու վերադարձը: Հայ չէ մնացած հոն որ պահանջէ ինքնորոշում:

Կարճ ասած, Ղարաբաղեան պահանջը սահմանափակելով «ինքնորոշման» չըջագիծին մէջ, հաստատած կ'ըլլանք ատրպէյճանական վարկածը, ըստ որուն Ղարաբաղը Հայաստան չէ եղած եւ Հայաստան պիտի չըլլայ: Ահաւասիկ ծուղակ մը, որուն մէջ ինկած ենք, յարմարցնելու համար մեր պահանջը սահմանադրութեան 70րդ յօդուածին եւ եղբայրական հանրապետութենէ մը հող պահանջելու աններելի «յանցանքի» մէջ չի յնարու համար:

Բ) ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ՝ ՀՈՂԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՔԻ ՊԱՐԱԳԱՅԻՆ

Ղարաբաղի Հայաստանին վերակրցման պահանջը առիթ ստեղծեց որ որ Սովետական Միութեան բարձրագոյն ատենները թեր ու դէմ կարծիքներ արտայայտելով՝ արտայայտուին նաեւ ազգամիջեան հողային տարակարծութիւններու լուծման ձեւերուն կամ կարելիութիւններուն մասին:

Մասնաւոր ուշադրութեամբ պէտք է կարդալ եւ եզրակացութիւններ հանել այս առթիւ եղած յայտարարութիւններէն, քանի որ անոնք կրնան առնչութիւն ունենալ եւ բացասականորէն անդրադառնալ մեր «հարցին» վրայ:

Մեր ակնարկութիւնը կը վերաբերի մանաւանդ «պատմութեան» վկայակոչման՝ հողային պահանջներու առնչութեամբ:

Այս կապակցութեամբ կարդացինք այսպիսի տեսակէտներ:

ՍՍՀՄ Գիտութիւններու Ակադեմիայի համաշխարհային տնտեսութեան եւ միջազգային յարաբերութիւններու հիմնարկի տնօրէն, ակադեմիկոս Ե. Մ. Պրիմաքով. «Պատմութեան վկայակոչումները «Քոնստիտուցիոն» (չիւրիչ) չեն»: (Ղարաբաղի հարցին վերաբերեալ Գերագոյն Սովետի նիստը, 1988):

Արքատի Վոլքի, Քրեմլինի յատուկ պատգամաւոր. «Հողամասի մը պատմական պատկանելիութիւնը այսօր այնքան ալ նկատի առնուելիք պարագայ մը չէ, այլ պէտք է նկատի առնուի որ հողային պահանջ մը

պէտք է լուծուի առանց վնասելու միւս ժողովուրդի կենսական շահերուն, ապա թէ ոչ կրնան արիւնալի մոր քախուսներու դուռ բացուիլ»

Նոյն անձնատրութիւնը՝ ԼՂԻՄԻ յատուկ կառավարման կոմիտէի ըստեղծումէն եւ անոր ղեկավար Յաւակուելին վերջ, «Փրավտա»-ի խնդրանքով «կը պատմէ թէ ինչով է թելադրական այդ որոշումը եւ ինչպիսի խնդիրներ են կանգնած յատուկ կառավարման կոմիտէի առջեւ»: («Սովետական Հայաստան», 17 Յունուար 1989). «Նախքան կոմիտէի խնդիրները բնութագրելը, ուզում եմ ասել, թէ ինչու այս անգամ ալ կուսակցութիւնը վնասակարէն եւ միանշանակ հանդէս եկաւ տարածքի վերածնունդին»:

«Այս կամ այն ժողովուրդի հողի դարաւոր պատկանելիութեան ամէն մի պատմական վկայակոչում բացարձակապէս անհիմն է: Դարեր շարունակ ժողովուրդները փայլել են, փոխել տարածքները, ապրել միասին: Կուսակցութիւնը մի շերտը միւսի վրայ է եկել...»:

Առանց որ որեւէ ձեւով ջանանք նախապաշարեալ կարծիք արտայայտել Ղարաբաղի ապագայի տնօրինման շուրջ, Արքատի Վոլքիի գլխաւորած «յատուկ կառավարման» տնօրինութեան տակ, չենք կրնար մեր ընդվզումը շարտայայտել վերջ յիշուած գաղափարներուն անպատասխանատու բնոյթին շուրջ, գաղափարներ՝ որոնք եթէ իրապէս կը ներկայացնեն սովետական գաղափարական մտածողութեան այժմեական դրութիւնը, ապա շատ վտանգաւոր կրնան դառնալ մեզի՝ հայերու համար:

Մէջբերուած այս դիրքորոշումները մեկնաբանութեան չեն կարօտիր, մանաւանդ հայ ընթերցողին համար, մանաւանդ հայ ժողովուրդին համար, որ բռնի ուժով, ցեղասպանութեամբ արտաքսուեցաւ իր հողերէն, եւ որ վճռած կը մնայ իր բռնազրաւուած հողերուն տէր դառնալ, ուշ կամ կանուխ, խաղաղ, օրինական միջոցներով եւ կամ, ի հարկին, ազատագրական պայքարով:

Եթէ վերոյիշեալ տեսակէտները շուկայ գտնեն եւ տարածուին, մանաւանդ Սովետական Միութեան մէջ, յստակ կը դառնայ թէ «պատմութիւնը» այլեւս նկատի առնուելու չէ՝ հողային վէճերը լուծելու համար: Հողային վէճերը պէտք է լուծուին առանց վնասելու միւս ժողովուրդին

կենսական շահերուն, իսկ կենսական շահ ըսելով կը հասկնանք սրաքիւ բօն պահպանել նոյնիսկ եթէ այդ վիճակը արդիւնքն է ոճիրի մը (Արեւմտահայաստան) կամ կամայականութեան մը (Նախնիներու եւ Ղարաբաղ):

Մենք կը յուսանք եւ կը հաւատանք թէ յիշեալ դիրքորոշումները չեն ներկայացնել սովետական միջազգային իրաւունքի հիմնաւորուած տեսակէտը եւ թէ անոնք առաւելաբար արդիւնքն են «պատեհապաշտութեան» եւ «քաղաքական» նկատումներու՝ քան թէ օրինական եւ իրաւական եզրակացութիւններու: Եթէ սխալած ենք մեր այս վճիռին մէջ, ապա կըրնանք դժբախտաբար իբրեւ «յետադիմական» որակել սովետական միջազգային իրաւունքի այս դիրքորոշումը եւ պայքարիլ անոր սրբագրման համար, թէ՛ Հայաստանի եւ թէ՛ արտասահմանի մէջ:

* * *

Ահաւասիկ, մէկ կողմէն Ղարաբաղեան պահանջատիրութեան «հողային պահանջ» ըլլալը, միւս կողմէն՝ պատմութեան վկայակոչման չէ գործացումը Արքատի Վոլքիի եւ իր համախոհներուն կողմէ, ահաւասիկ կ'ըսենք երկու երեւոյթներ՝ որոնք հիմնադրական կ'ընեն հայութեան պահանջատիրութիւնը՝ հանդէպ նախնիներու եւ Արեւմտեան Հայաստանի:

Ղարաբաղի վերադարձը՝ Հայաստանին, անբաժան մաս կը կազմէ մեր հարցին, որ հիմնուած է պատմական եւ իրաւաբանական տուեալներու վրայ: Իրաւաբանական ինքնիսկ պատմական հանգամանք ունի: Ամփոփ կերպով կրնանք ըսել թէ պատմութեան ընթացքին մէջ է որ զաւթած են մեր հողերը, մեզ վտարած հոնկէ, անմարդկայնօրէն ոճրային արարքով մը, որ 20րդ դարուն կը կոչուի Յեղասպանութիւն: Այս բոլորէն վերջ յանգիլ այն եզրակացութեան, թէ պատմութիւնը չի կրնար հիմք ծառայել հողային պահանջի, համազօր է ոճրագործին պաշտպան կանգնելուն եւ անոր արարքը վարձատրելուն:

Ահա ասոնք են Ղարաբաղեան պահանջին առընթեր ծագած այն երկու հարցերը, որոնք կը կարօտին լայն վերլուծութիւններու եւ դարմանումի:

Հալեպ, Մարտ 1989

BAIKAR ARMENIAN WEEKLY
ISSN 0741-8396
An A.D.L. Publication
ՊԱՅՔԱՐ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ
Պաշտօնաթերթ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Ամերիկայի Արեւելեան Երջանակի
Published weekly except two weeks in July by:
Baikar Association, Inc.
468 Mount Auburn Street, P.O.Box 302, Watertown, MA 02172
Telephone: (617) 924-4420
Telex (TLXI): 928436 (BAIKAR/MIRROR) • FAX (617) 924-3860
Editor: **KRIKOR KEUSSEYAN**
Subscription Rate: \$50 per year
Advertising: \$5.00 per column inch
Second Class Postage paid at Boston, MA
POSTMASTER: Send address changes to **Baikar Armenian Weekly**, P.O.Box 302, Watertown, MA 02172